ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ՓԵՏՐՎԱՐԻ 2025թվականի N 0217-Ա

ՀՈՂԱՄԱՍԻ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԱՌԿԱ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՁԵՎԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ և 43-րդ հոդվածներով, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով, 64-րդ հոդվածի 2-րդ, 8-րդ և 16-րդ կետերով, Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ 50-Ն օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածների պահանջներով, հաշվի առնելով Ռաֆիկ Գալուստի Ղումաշյանի (ծնված՝ 23.05.1954թ.) դիմումը, «Գասպար Վեքիլյան » ԱՁ-ի կողմից կազմված հողամասի հատակագիծը, Մարգահովիտ գյուղի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 03.04.1991 թ-ի թիվ 02 որոշումից քաղվածքը, ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը , որ հողամասն ընդգրկված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի կազմում, չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահանջվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք,շինությունները կառուցված չեն, չեն գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ՝ որոշում եմ

1.Հաստատել Փամբակ համայնք, Մարգահովիտ, 8-րդ փողոց, 15 բնակելի տուն հասցեում գտնվող 06-070-0122-0022 կադաստրային ծածկագրով 0.31047 հա բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասի չափերը՝ համաձայն սույն որոշման հավելվածը հանդիսացող հատակագծի:

2.Վերականգնել և օրենքի ուժով ճանաչել Ռաֆիկ Գալուստի Ղումաշյանի (ծնված՝ 23.05.1954թ.), Լարիսա Կոլիկի Մալաքյանի (ծնված ՝ 04.01.1958թ.), Իրինա Ռաֆիկի Ղումաշյանի (ծնված՝ 06.07.1984թ.), Թինա Ռաֆիկի Ղումաշյանի (ծնված՝ 05. 09.1986թ.) և Ինգա Ռաֆիկի Ղումաշյանի (ծնված՝ 13.07.1988թ.) բաժնային սեփականության իրավունքը 06-070-0122-0022 կադաստրային ծածկագրով 0.31047 հա բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասի և հողամասի վրա գտնվող՝ մինչև 2001թ-ը կառուցված 504,11 ք/մ ընդհանուր մակերեսով բնակելի տան և օժանդակ շինությունների նկատմամբ:

3.Ուժը կորցրած ճանաչել համայնքի ղեկավարի 04 հոկտեմբերի 2024 թվականի N 1196-Ա որոշումը և 06-070-0122-0022 կադաստրային ծածկագրով անշարժ գույքի համար նախկինում տրված բոլոր հողհատկացման քաղվածքները և պետական գրանցման համար հիմք ընդունել 13.02.2025թ-ին տրված ճշտված քաղվածքը:

4.Սույն որոշումից ծագող իրավունքները և պարտականությունները ենթակա են պետական գրանցման ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԺՊ՝ Ա. ԱՆԱՆՅԱՆ

13 փետրվարի 2025, գ. Փամբակ